Վիրտուալ պատկերասրահ
Emaze. Com

Emaze –ն ամպային գործիք է նախատեսված գրավիչ, գունեղ և անիմացիոն սահիկաշարեր (պրեզենտացիաներ)ստեղծելու համար:

Հավելվածը թույլ է տալիս սլայդերի մեջ տեղադրել պատկերներ, տեսանյութեր, ստեղծել աղյուսակներ և այլն: Մեծ թվով ձևանմուշների առկայությունը թույլ կտա հեշտությամբ ստեղծել ոչ միայն սահիկաշարեր, այլ նաև ստեղծել ինտերակտիվ էջ բլոգում կամ կայքում, ստեղծել լուսանկարչական ալբոմ օրիգինալ սլայդ շոուով: Ինչպես նաև կարող եք վերցնել ձեր հին PowerPoint սահիկաշարերը և դրանք ինտեգրել Emaze նախագծին, որի արդյունքում այն կվերածվի շատ հետաքրքիր վիրտուալ պատկերասրահի:

Ինչպես գրանցվել և աշխատել

Քայլ 1

Նախ պետք է մուտք գործել https://app.emaze.com/ հղումով և գրանցվել:



Գրանցվելու համար պետք է կատարել նկարում նշված քայլերի հաջորդականությունը:



Ընդհանուր ինտերֆեյսը ունի հետևյալ տեսքը



Այստեղ կարող եք ստեղծել սահիկաշարեր (պրեզենտացիաներ), վեբ սայտեր, բլոգեր, ֆոտո ալբոմներ, էլեկտրոնային քարտեր ինչպես նաև կատարել հարցումներ:

Ձեր կողմից ստեղծված բոլոր նյութերը կպահպանվեն My թղթապանակում:

Նոր պրեզենտացիա ստեղծելու համար՝



Բացվում է նոր էջ, որտեղից պետք է ընտրել արդեն պատրաստի ձևանմուշներից: Կարող եք ձևանմուշները ընտրել ըստ թեմաների: Նախքան ձևանմուշը վերջնական ընտրելը կարող եք տալ նախադիտում և տեսնել ընդհանուր տեսքը: Իսկ վերջնական ընտրելուց հետո սեղմել ձևանմուշի վրայի խմբագրել կոճակը և սկսել աշխատել:



Կարելի ընտրել վիրտուալ պատկերասրահ, թերթվող գիրք, պտտվող խորանարդ, երկնաքերեր, գրատախտակ, և շատ այլ տարբեր գեղեցիկ 3D վիզուալ էֆեկտներով ձևանմուշներ:

Համապատասխան ձևանմուշը ընտրելուց հետո, կբացվեն տարբեր սլայդեր նկարներով, վերնագրերով, այդ սլյադերից ըստ ցանկության կարող եք ընտրել և ավելացնել ձեր պրեզենտացիայի մեջ:



Աշխատանքային գործիքները գտնվում են վերևում

Ի՞նչ կարելի է ավելացնել սլայդում՝

1. Տեքստ (Տեքտը կարելի է խմբագրել, փոխել չափը, գունավորել, տալ տարբեր էֆեկտներ, թեքություններ)



2. Նկար

3. Աուդիո ֆայլեր(հղումներ)



(Հնարավոր է նաև համապատասխան նշումով ամբողջ պրեզենտացիան ուղեկցել երաժշտությամբ:)

4. Տարբեր իկոնաներ
5. վիդջեթներ

Եթե չեք ցանկանում օգտվել արդեն պատրաստի շաբլոններից ապա կարող եք նաև ստեղծել ձեր սահիկաշարը զրոից:

Դրա համար՝



Պատրաստի պրեզենտացիան կարող եք պահել, կիսվել սոց ցանցերում, ջնջել: Վերջնական տեսքը պատկերացնելու համար կարելի է տալ նախադիտում (view):

Իսկ եթե արդեն ունեք նախապես Power Point սահիկաշար, ապա այն կարող եք տեղափոխել Emaze և այն ներկայացնել նորովի, հետաքրքիր անիմացիոն լուծումներով:



Որից հետո՝



Ձեր համակարգչից ընտրերում եք համապատասխան սահիկաշարը, այն ներբեռնում ծրագրի մեջ, ընտրում ձեր ցանկացած ձևանմուշը և շարունակում աշխատել վերը նշված կանոններով: